ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/16

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝
Բողոքաբեր «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Տ. Նաղդալյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 23.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է դադարեցնել Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. թիվ 3-րդ արձանագրությամբ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձի 23.04.2019թ. որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 29.04.2019թ., 10.05.2019թ., 16.05.2019թ. և 21.05.2019թ. նշանակվել են նիստեր:

Բողոքաբերի կողմից 17.05.2019թ. ներկայացվել է բողոքի լրացում:

Բողոքի քննությունն ավարտվել է 21.05.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 23.05.2019թ.:

2. <u>«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Վանաձոր համայնքապետարանի կարիքների համար «Լանաձոր համայնքի փողոցների նշագծման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԼՄՎԲ ԳՀ ԱՇՁԲ 9/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից;

Այնուհետև, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ԼՄՎԲ ԳՀ ԱՇՁԲ 9/43» ծածկագրով ընթացակարգի հրավերով որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

16.04.2019թ. Բողոքաբերը էլեկտրոնային հասցեից՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել պահանջված որակավորման չաափանիշին վերաբերող փաստաթղթերը:

Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. տեղի ունեցած նիստի 3-րդ արձանագրության համաձայն՝ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրր հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեր աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32 րդ կետի 1 'ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված

ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կցանկանայինք Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն որակավորման չափանիշի փաստաթղթերը ուղարկել է ոչ միայն 16.04.2019թ. էլեկտրոնային տարբերակով, այլ նաև երբ հեռախոսազանգի միջոցով կապ է հաստատվել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հետ և Բողոքաբերը աեղեկացել է, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժվում է որակավորման չափանիշների փաստաթղթերը չներկայացնելու հիմքով, քանի որ այդ փաստաթղթերը էլեկտրոնային փոստի միջոցով չեն հասել պատվիրատուին և մտածելով, որ միգուցե առկա է խնդիր էլեկտրոնային փոստի միջոցով փաստաթղթերը ուղարկված լինելու հետ, «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնել է. որ պատրաստ է էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված փաստաթղթերը ներկայացնել նաև առձեռն և անմիջապես Երևան քաղաքից «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ուղևորվել է դեպի Վանաձորի համայնքապետարան և տարել որակավորման չափանիշի փաստաթղթերը նաև թղթային տարբերակով:

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, ըստ որի՝ որակավորման փաստաթղթերը ներկայացնիլու վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել որակավորման չաւիանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Հետևաբար առկա չէ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտում, քանզի նշված ենթակետի համաձայն՝ գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը, իսկ տվյալ դեպքում առկա է «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուի էլ. փոստի հասցեին ուղարկելու ապացույցները:

Միևնույն ժամանակ «ԱԱԿԵՏ-16» ՍՊԸ-ն պահանջվող որակավորման փաստաթղթերը 18.04.2019թ. ներկայացվել է նաև թղթային եղանակով:

Խնդրում եմ հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «ԱԱԿԵՏ-16» ՍՊԸ-ի և օրինակ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցի միջև առկա է 4,000,000 ՀՀ դրամի տարբերություն, ինչը

մեր կարծիքով բավականին մեծ խնայողություն կհանդիսանա մարզային համայնքի բյուջեի վրա:»:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է դադարեցնել Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. թիվ 3-րդ արձանագրությամբ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ընկերության կողմից 17.05.2019թ. ներկայացվել է բողոքի լրացում, որի համաձայն.

«Հայտնում ենք, որ gnumnervanadzor@mail.ru էլ. հասցեն հանդիսանում է այն նույն էլ. հասցեն, որը նշված է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնանշման հարցման հրավերում, և որից ստացվել է որակավորման փաստաթղթեր ներկայացնելու պահանջը:

Միևնույն ժամանակ հայտնում ենք, որ բողոքի վերաբերյալ բոլոր ապացույցները ուղարկվել է և 12.05.2019թ. gbqa_qart@mail.ru, այնուհետև կապված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի աշխատակազմում կատարված էլ. հասցեի փոփոխությունը 15.05.2019թ. ուղարկվել է նաև gbqa_ohanyan@mail.ru էլ. հասցեին:

Հայտնենք, որ որակավորման փաստաթղթեր ներկայացնելու ծանուցումը Վանաձորի քաղաքապետարանի կողմից ներկայացվել է 12.04.2019թ. (ուրբաթ օր) gnumnervanadzor@mail.ru էլ. հասցեից, իսկ ընկերության կողմից այդ փաստաթղթերը ներկայացվել է 16.04.2019թ. (երեքշաբթի օր):»:

3. <u>Վանաձորի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 26.04.2019թ. գրությամբ դիմել է Վանաձորի համայնքապետարանին՝ հնարավորություն տալով «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից 23.04.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր կարծիք չի ներկայացվել:

Պատվիրատուն պատշաճ ծանուցված լինելով նիստերի օրվա, ժամի և վայրի մասին չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

4. <u>ԳԲՔԱ-LO-2019/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձոր համայնքի փողոցների նշագծման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերով, որպես գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնայի փոստի հացե նշվել է gnumnervanadzor@mail.ru:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգին մասնակցելու նպատակով, թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում որպես ընկերության էլեկտրոնային փոստի հասցե նշել է safaryan.50@mail.ru:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ին:

12.04.2019թ. gnumnervanadzor@mail.ru էլ. հասցեից Ընկերության safaryan.50@mail.ru էլ. հասցեին ուղարկվել է ծանուցում՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնման ընթացակարգի համար պահանջվող որակավորման փաստաթղթերը ներկայացնելու համար:

Ընկերության safaryan.50@mail.ru էլ. հասցեի 16.04.2019թ. Պատվիրատուի gnumnervanadzor@mail.ru էլ. հասցեին հրավերով սահմանված կարգով և ժամկետում ուղարկվել է ընթացակարգի համար պահանջվող որակավորման փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն էլ. փոստի միջոցով ծանուցվել է որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սակայն Ընկերությունը հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովն որոշել է «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-

ի կողմից 23.04.2019թ. ներկայացված բողոքն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված

տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կարգը հաստատելու մասին» կարգի՝ 16-րդ կետի համաձայն հրավերով նախատեսվում է, որ՝

1) բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ընթացակարգով գնումների կատարման դեպքի, գնահատող հանձնաժողովի քարտուղարը՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը պահանջվող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուղարկում է հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին: Քարտուղարը պարտավոր է մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերն ստանալու օրը հաստատել դրանց ստանալու հանգամանքը՝ հրավերում նշված իր էլեկտրոնային փոստից մասնակցի էլեկտրոնային փոստին հավաստում ուղարկելու միջոցով:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում

իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Վանաձորի համայնքապետարանի կողմից հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի ադրյունքում 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչել «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն:

12.04.2019թ. gnumnervanadzor@mail.ru էլ. փոստի հասցեից Ընկերության safaryan.50@mail.ru էլ. փոստի հասցեին ուղարկվել է ծանուցում՝ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնման ընթացակարգի համար պահանջվող որակավորման փաստաթղթերը ներկայացնելու մասին:

Ընկերության safaryan.50@mail.ru էլ. փոստի հասցեից 16.04.2019թ. Պատվիրատուի gnumnervanadzor@mail.ru էլ. փոստի հասցեին ուղարկվել է ընթացակարգի համար պահանջվող որակավորման փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Ընկերությունը հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել որակավորման փաստաթղթերը, ինչով պայմանավորված «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացվել է Պատվիրատուի կողմից ծանուցմամբ պահանջված՝ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից 23.04.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

Պարտավորեցնել դադարեցնել Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. թիվ 3-րդ արձանագրությամբ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ